

Թիւնները նոյն գաւառները կ'երթան ,  
 այնպէս որ չորս տարրական մարմիննե-  
 րը տիեզերաց մէջ բաժնուած են կար-  
 դաւորապէս . և բարոյական ու քաղաքա-  
 գիտական աշխարհքին մէջ՝ կը տեսնենք  
 չորս դասերն իւրաքանչիւրը միացած  
 մասնաւոր կարգաւ մը , և բոլոր Պե-  
 տուԹիւնը հիմնուած արդարութեան  
 վրայ կամ իւրաքանչիւր քաղաքացւոյ իր  
 բնութիւնը պահպանելու վրայ , այն-  
 պէս որ կիրքերը հեռացած են , և միու-  
 Թիւնը այնպիսի զօրութեամբ կը տիրէ  
 մարդուս քաղաքին մէջ՝ ինչպիսի զօրու-  
 Թեամբ կը տիրէ աշխարհիս քաղաքին  
 մէջ :

Եւս միութիւնն է , զոր ըմբռնելու  
 փառքն ունեցաւ Պղատոն և ինքը Չա-  
 նաց ամէն բանի մէջ անոր տիրել տա-  
 լու . այս է որ իր փիլիսոփայութեան  
 այնչափ յարգ տուած է . և այս է նաև  
 առաջիկայ քննութեանս առարկայն , ո-  
 րովհետև ասիկայ կը պսակէ բոլոր դը-  
 րութիւնը :

Կը շարունակուի :

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ**

**Ազգային բանկակիսն երգ մը :**

Երգ Արագի :

Եւրագիլ , բարով եկիր ,  
 Դուն արագիլ , բարով եկիր .  
 Իմե գարնան նըշան բերիր ,  
 Դու մեր սըրտիկ զըւարթ արիր :

Եւրագիլ , մեզի իջիր ,  
 Դուն արագիլ մեր տուն իջիր ,  
 Ի՛նք խացի ծառին բունիր ,  
 Դու մեր սիրուն :

Եւրագիլ , քե գանգրտիմ ,  
 Հայ արագիլ քե գանգրտիմ .  
 Իմ հազար ցաւերս ասիմ  
 Արրտիս ցաւեր հազար ցաւ :

Եւրագիլ , եք գընացիր  
 Դուն մեր ծառէն եք գընացիր ,

Օ ուլումաթ հովեր արին ,  
 Օ ըծղուն ծղղկներըս չորցուցին :

Պըսպղուն երկինքն մըԹներ ,  
 Լն պըսպղուն երկինքն մըԹներ .  
 Ի՛նք վերէն ձըներ բըրդեր ,  
 Օ աղկաթափ ձըմեռն հասեր :

Ս արագայ սարէն բըռնած  
 Լն Ս արագայ սարէն բըռնած ,  
 Չիւն իջնէր ըմէն ծածկեր ,  
 Կանաչ դաշտիկըս ցուրտ աներ :

Եւրագիլ , մեր դրախտին ձիւնիկ  
 Պատեր մեր դրախտիկ .  
 Կանաչուն մեր վարդնիս  
 Յամբեր պաղէն ը ձըմըռէն :

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔ**

Ատրանդական Երկրորդ-նկատար :

Ինչպէս որ յայտնի է ամենուն՝ քանի  
 մը տարիէ ՚ի վեր բոլոր Եւրոպայի մը-  
 տադրութիւնն ու հետաքրքրութիւնը  
 գրաւած խնդիրներէն մէկն էր այս կեն-  
 ցազօգուտ առաջարկութիւնս՝ թէ ար-  
 դեօք կարելի է Եւրոպան Եւրոպայի  
 հետ միացընել հեռագրական թելով  
 մը : Ըստերուն ՚ի սկզբան անդ մտաց  
 ցնորք մը , շահախնդիր մարդկանց ա-  
 ռաջարկութիւն մը երևցաւ աս բանս ,  
 որուն գործադրութիւնը անկարելի և  
 ետեւէ ըլլալն ալ յանդուգն ձեռնար-  
 կութիւն մը կը կարծուէր . և իրաւը-  
 նէ նոյն իսկ աս բանս մտածողներն և  
 առաջ տանելու ետեւէ եղողներն ալ մի-  
 ջոց եղաւ որ յուսահատելու պէս եղան .  
 և թէ որ մարդկային մտաց գերազանց  
 հանձարներէն չըլլային , և մտքերնին  
 հաստատապէս չղնէին թէ առանց եր-  
 կարատե համբերութեան և արգելք-  
 ներու յաղթելու ջանից աշխարհքիս  
 վրայ բան առաջ չերթար , տարակոյս  
 չկայ որ ձեռնթափ պէտք էին ըլլալ :  
 Եւ դիւցազնական սկզբունքներով գրե-